

մշակուած խաչակրական շարժումին նպաստելու դիտումով: Իր այս առաքելութիւնը յետոյ կ'երեւի, թէ առասպելապատում հանգամանք մը առած է և իր հայրենիքին և անցեալ գործունէութեան դաշտին՝ Վասպուրականի մէջ արձագանգ գտած է, իբր թէ ան եղած ըլլայ «գլուխ ազգին ֆռանկաց» ու եկած՝ «ի վերայ Թուրքին»:

Ըմբռնելու համար տիրող մթնոլորտը Եւրոպայի, մասնաւորապէս Ֆրանսայի մէջ, պէտք է աչքի առջև բերել Լուի Ժ. Ի և իր անուանի նախարարին՝ Գոլպէռի ձեռնարկները ու Թուրքիոյ դէմ 1670ին Ֆրանսայի բռնած սպառնական դիրքը, որ պահ մը խանդավառեց ամբողջ կաթոլիկ աշխարհը նոր խաչակրութեան մը երազով: Այդ ցնորքը թէև չուտով «յօգս ցնդեցաւ», քանի որ Լուի Ժ. շատ չանցած դարձաւ Թուրքերը սիրաշահելու հին քաղաքականութեան՝ բարեկամ ըլլալով Թուրքիոյ հետ 1673ին, Ֆրանսայի նախկին առանձնաշնորհները վերահաստատելու համար(1), սակայն կաթոլիկ աշխարհը չդադրեցաւ յոյսեր սնուցանել և ծրագիրներ մշակել, Արեւելքը քրիստոնէացնելու կամ Թուրքիան բաժնելու դիտումով(2):

Պէտք է մոռնալ, թէ Արեւելքի ժողովուրդները ոգեւորուելու ուրիշ պատճառներ ալ ունէին:

(1) Տես Բրոժ. Կ. Թումանյան. Պատմութիւն Արեւելեան խնդրոյ եւ առաջնորդ Հայկական Հարցի, էջ 425—426:

(2) Այս մասին ամբողջական գաղափար մը ստանալ փափաքողները պէ՛տք է կարդան Լէոյի Խօճայական Կապիտալ (Երեւան, 1934) գործը, մասնաւորապէս անոր 108—121 էջերը, ուր կան ցաւ հետաքրքրական տեղեկութիւններ, թէ՛ ժամանակը, թէ՛ տիրող զգացումները եւ թէ արեւելեան ժողովուրդներու միամիտ խանդավառութիւնը լուսաբանող: